



Ա - Բ - Ա - Ր - Ա - Տ - Ս

ԹԱԴԻ ԱՐԴՅՈՒՆ Ա. Ռ. 1889 ՏԱՐԻ ԽԱՐԱՀԱՅԻ ՖՈՏՈԳՐԱՖԻ

28


ԹՈՒՂՎԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿՈՎՈՒՄ

Տ. Տ. ՄԱԿԱՐԻԱՑ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒԵԿԻԿՈՒՄ ԱՄԵՐԻԿԱ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՅՈՐԵՆ ԴԱՍ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ Տ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆ ՀԱՅՈՒՆԵՐՆ ԴԱՍ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ



ԱԿԱՐ ԴԱՌՈՅ ՔՐԻՍՏՈՆԻ ԵՒ ԱՆՀՈՍՏԱՆԻ ԿԱՄՈՒՆ
ԱՍՏՈՒՆԱԾ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒԵԿԻԿՈՒՄ ԱՄԵՆԱՅԱ
ՀԱՅՈՅ ՊԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐք ՀԱՄԱԶԳԱԿԱՅԻ
ԱԴՐԵԼԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԻԱՆ ՄԱՅՐ ԵՎ ՀԱՅԱՏՈՅ
ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒԵԿԻԿ Էջմիածնի:





Յ Ա Պ Ա Վ Ո Ւ Յ

Տ Ե Ր Ա Վ Ո Ւ Յ Ա Վ Ո Ւ Յ Ա Վ Ո Ւ Յ Ա Վ Ո Ւ Յ

Հ Ա Ր Ա Վ Ո Ւ Յ Ա Վ Ո Ւ Յ Ա Վ Ո Ւ Յ Ա Վ Ո Ւ Յ

Ա Վ Ո Ւ Յ Ա Վ Ո Ւ Յ Ա Վ Ո Ւ Յ Ա Վ Ո Ւ Յ Ա Վ Ո Ւ Յ Ա Վ Ո Ւ Յ



Երջանկազարդ կաթուղիկոսաց Տանն Կիլիկիոյ և Աղթամարայ, սրբազն պատրիարքացն Հայոց Ս. Երուսաղեմայ և Կոստանդնուպոլսոյ, գերապատիւ առաջնորդաց վիճակացն մերոց որ ի Խուսաստան, ի Թուրքիա և ի Պարսկաստան, շնորհազարդ վարդապետաց և քահանայից՝ քարոզչաց

Բանին կենաց և ամենայն հոգեւոր պաշտօնէից Հայաստանեայցս Առաքելական սուրբ Եկեղեցւոյ, ևս և համօքէն դասու ժողովրդականաց՝ ըստ իւրաքանչիւր կարգի և աստիճանի՝ արանց և կանանց, ծերոց և տղայոց և ամենայն չափու հասալի՝ հաւատով ի Քրիստոս զարգացելոց, որք ի սփիւռս աշխարհաց՝ մատուցի Յիսուսաւանդ ողջոյն, ուրի, խաղաղութիւն և հայրապետական օրհնութիւն. ամէն:

Լուարուք, շնորհածին որդիք նորոյս Սիովնի՝ Առաքելական Մեծի Աթոռոյ Կաթուղիկէ Սրբոյ Էջմիածի և ունին դիք բանից, զորս ոչ ես, այլ սրբազան առաքեալն Պօղոս, շարժեալ ի Հոգւոյն Սրբոյ, գրէ առ հաւատացեալսդ. « Որպէս ընկալարուք զՔրիստոս Յիսուս զծէր, նովին գնասջիք: Զգոյշ լեռնիք, մի ոք իցէ որ զձեզ կողոպտիցէ ճարտարութեամբ և սնոտի խաբէութեամբ, որք ըստ մարդկան աւանդութեան և ըստ տարերց աշխարհի և ոչ ըստ Յիսուսի Քրիստոսի» :

Գիտեմ, սիրեմք, զի ի բազմատագնապ ժամանակիս յայսմիկ բազում ինչ է, որ հայի ի մոլորեցուցանել զմիտս ձեր գիտեմ, զի փորձութիւն բազում պաշարեալ ունի զձեղ առ ի դրդուեցուցանել ի հաւատոցն, յոր կոչեցեալքդ էք շնորհօք Սուրբ Հոգւոյն: Այլ քաջալերեցարուք և հաստատուն կալարուք զոր ուսայքդ. ունիք ձեղ առաջնորդ հաւատոյ և ճշմարիտ ուղեցոյց վարդապետութեան կրօնից զատուածաշունչ մատեանս հնոց և նորոց կտակարանաց: « Այլ գու, ասէ ս. առաքեալն Պօղոս, « հաստատուն կաց յոր ուսարդ և հաւատարիմ եղեր. գիտես՝ ուստի ուսար, զի զգիրս սուրբս գիտես, որ կարող են իմաստուն առնել զքեզ ի փրկութիւն ի ձեռն հաւատոցն որ ի Քրիստոս Յիսուս »: Լուարուք ապաքէն, զի որ խօսեցաւ ի գիրս սուրբս բերանով մարդարէից և առաքելոց, նոյն Հոգին Սուրբ ծանոյց մեզ և զպատգամն փրկութեան: Արդ աւասիկ եկեալ հասեալ են առ դրունս ձեր արբանեակք մոլորութեան, որոց ճարտարութիւն արուեստից ի բան և՛ ի գիր և՛ ի գործ յայն և՛ եթ հայի կէտ նպատակի, զի կարծեցուցանիցեն զձեղ մոլորեալս ի ճշմարտութեանց հաւատոյ. արդ որպէս ուսա-

ըուքդ և ընկալարուք զՔրիստոս Յիսուս զՏէր, նովին գնաս-
ֆիք: գիտիցեք ապաքէն թէ զի՞արդ ըմբերանել ըմբերանիցէ
զմոլորեալմն Տէրն մեր. «Մի զգք կոչէք, ասէ, վարդապետ,
զի մի է ձեր ուսուցիչ. և մի կոչիցիք ուսուցիչք, զի ու-
սուցիչ ձեր Քրիստոս է», » Փութացարուք ապաքէն զհետ
մեծի անզուգական Վարդապետին, որ հովիւ է մեր ճշմարիտ.
«Ճանաչէ զիւրսն և ճանաչի յիւրոցն, որք զձայն նորա ճա-
նայեն և զօտարի զհետ ոչ երթիցեն, այլ փախիցեն ինմանէ,
զի ոչ ճանայեն զձայն օտարաց»: Մի հայիք ի մոլորութիւնս,
որք յօտարաց առ ձեզ պատրուակաւ ճշմարտութեան քա-
րողեալ լինին. բանք օտարաց՝ յանուն Աստուծոյ հնչեցեալք՝
միտս ունին երկդիմիս և հային ի շահ և եթ նոցին և ի
փառս աշխարհի: Մի խարիք ի մտացածին ճարտարութեանց
անտի որսողացն, որք զհետ լինին ի կողոպտել զձեզ ի շնոր-
հաց Հոգւոյն Սրբոյ և յանդորրութենէ խղճի մոտաց և զամե-
նայն մարդկեղէն աւանդութիւնս կարծեցուցանեն յաղերէ
անտի Աստուծաշունչ մատենից: Յիշեսօթիք հանապազ, զի
«մեք ոչ զհոգի աշխարհի առաք, այլ զհոգին, որ յԱստու-
ծոյ, զի ծանիցուք զայն, որ յԱստուծոյն շնորհեցաւ մեզ»:

Ապաքէն զոր ուսուցանէ Հոգին Սուրբ՝ ի հաւատոյան ըզ-
գուշանալ ձեզ ի վարդապետութեանց, առհասարակ յօտա-
րաց անտի հնչեցելոց ի լսելիս ձեր, շատ լիցի այսքանեաւ
ածել ի միտս հարազատ որդւոցդ մօրս մերոյ լուսոյ՝ սրբոյ
Կաթուղիկէ Էջմիածնի: Այլ արդ ամենայն լրջմուռթեամբ
ունկն դի՞ք բանիցս, զորս ըստ սրբազն պարտուց պաշտա-
մանս հանգամանք ժամանակիս հարկեցուցանեն զիս աւանդել
ձեզ գրով ի դժուշութիւն յայնոցիկ արբանեկաց Հռովմայ,
որք ի հրապոյրս անդ աշխարհային մեծութեան գան ի գայ-
թակեցուցանել զձեզ և հանել ի ծոցոյ սրբոյ Կաթուղիկէ
և Առաքելական Եկեղեցւոյս Հայաստանեայց, ըստ թելա-
գրութեան շրջաբերական թղթոյ քահանայապետին Հռովմայ
Լեռնի ծԳ. տուելոյ յանուն պատրիարքին հռովմէական Հա-
յոց ի 45/23 յուշիսի տարւոյս:

Լուարուք ինձ, որդեակք իմ. մեծ ևս քան զայս ուրա-

խութիւն ոչ ոք ունի, յորժամ տեսանեմ, ըստ Առաքելոյն զի որդեակքդ իմ ճշմարտութեամբ գնայք ի փորձութիւնսն հաւատոյ, որ ի Քրիստոս Յիսուս: Յուշ լիցի ձեզ, զի և ամսնիք մեր երանելիք կատարեցին զրնթացս իւրեանց ի բոլո, փորձութեան հաւատոյ: Քանզի, որպէս գիտեմբ, ի վաղնջուց անտի ժամանակաց անքննելի նախախնամութեամբ Ամենակալին Աստուծոյ լուսափայլեալ պայծառանայր յաշխարհի մերում վարդապետութիւն սրբոյ Աւետարանին Քրիստոսի, իբրև յամենազօր հրամանէ Հոգւոյն Սրբոյ հնչէին լերինք և հովիտք հայրենեաց մերոց ի ձայն քարոզութեան սրբոց առաքելոյն՝ Թագէի և Բարթուղիմեայ և հեղմամբ արեան նոցին և սրբոց Վկայիցն՝ Ոսկեանց և Սուքիստեանց լուացեալ սրբէին յաղտոյ հեթանոսական մոլորութեան դաշտք և հրապարակք գաւռուաց և քաղաքաց հնոյ աշխարհին Հայոց: Անդ ի յաճախել քարոզութեան Բանին կենաց, իբրև աճէր և բաղմանայր թիւ նահատակաց և վկայից յաշխարհիս մերում, պարգևեալ լինէր յամենախնամ Արարէն լուսաւորիչ Հոգւոց մերոց մեծ խոստովանողն և բաղմաչարչար վկայն ճըշմարտութեան, յաջորդն նախկին լուսաւորչացն՝ Թագէի և Բարթուղիմեայ՝ սուրբն Գրիգոր Պարթև, որում պայծառահրաշ ցուցակութեամբ վերնոյն ընծայեցաւ ի Վաղարշապատ քաղաքի աստուածակերտ ամպեղէն շինուած մօրս մերոյ լուսոյ՝ սրբոյ Կաթուղիկէ Եկեղեցւոյս Հայաստանեայց: Արդ ըստ ցուցակութեանս ըստ այսմիկ ի գագաթն մեծի աստրւածակերտ շինուածոյն Կաթուղիկէ Եկեղեցւոյս կարգեալ եղեւ Աթոռոս այս Հայրապետութեան պահապան և դէտ սրբութեան կրօնից, պսակեալ լուսաղայծառ Խաչիւն Քրիստոսի, օրինակաւ աղնիւ և պատուական տարերց բնութեան՝ ոսկւոյ, հրոյ, ամպոյ և լուսոյ, յորոց կանգնեցաւ շինուածն զարմանալի, եցոյց Տէր, զի յաւիտենական է սուրբ Եկեղեցիս Հայաստանեայց և անեղծանելի ի մարդկանէ, զոր ոչ վերինք կարեն շարժել և ոչ ներքինք դրդուեցուցանել, զի զօրութիւն Ամենակալին բնակեալ է ի նմա: Եւ այսպէս՝ ցուցմամբ մատին Աստուծոյ ընկալաւ աշխարհս Հայոց

զայս Աթոռ երկնահանգէտ, որ բարձր քան զերկին և պայծառ քան զարեցակն գեր ի վերոյ երեւալ, պանծայ արդ փառօք իւրավը, ի դարս դարս ժամանակաց եղեալ աստղ լուսատու տանս Հայոց ըստ աւետարանական վարդապետութեանցն, զորս աւանդեցին սուրբ առաքեալքն և երանելի հարք Եկեղեցւոյ Հայաստանեայց Ապաքէն նոյն Տէրն ամենախնամ յարոյց յորդւոց և ի ժոռանց սրբոյն Դրիգորի լուսաւորչին մերոյ զսխոյեանս ինքնուրոյնութեան Հայաստանեայց Առաքելական սուրբ Եկեղեցւոյ զսուրբ Հայրապետոսն զԱրիստակէս և զՎրթանէս, զՄեծն ներսէս և զԱհակն Պարթե, ընդ որս և զսուրբն Մեսրովպ և զամենայն վաստակակիցս սորաւ որք լցին զվայրս աշխարհիս մերոյ բազմութեամբ Եկեղեցեաց վանօրէից և վկայարանաց և հնէցուցին ի նոսա զձայն քարոզութեան սրբոյ Աւետարանին ի բարբառ հայրենի՝ թարգմանութեամբ սրբոց կտակարանացն:

Արդ լուարուք ամենեքեան և ի միտ առէք զանհերքելիս զայս ճշմարտութիւն զի, որպէս լուայք, սրբոց կտակարանացն ուսմունք և շնորհաբաշխ վարդապետութեանն Քրիստոսի հաստառութիւն ի Հայս յաջողեալ լինէր մարդասիրական ողորմութեամբ Բարձրելոյն ընդ ձեռն նախսկին լուսաւորչացն մերոց գեռ յայնժամ, յորժամ Հռովմ և համօրէն արեմատեայք ի խաւարի կուապաշտութեան թարթավէին: Ի շնորհաց անտի Հոգւոյն Սրբոյ ի դարս դարս յարածիդ ժամանակացն անցելոց սուրբ Եկեղեցին Հայաստանեայց, յար ի մեծի պարզութեան եղեալ և յանարատութեան, բարձր ի գլուխ պանծայ ընդ անեղծ պահպանութիւն նախնի կանոնաց և կարգաց Եկեղեցւոյն Քրիստոսի: Անդրանիկն յեկեղեցիս քրիստոնէից սուրբ Եկեղեցիս Հայաստանեայց հանապազ խոտեալ մերժեալ է յինքենէ զամենայն մոլորութիւնս հաւատոյ, և զնորամուտ վարդապետութիւնս կրօնից ընդ բանիւ արաբեալ կայ միշտ ի մեծի խոստովանութեանն, զոր սահմանեցին սուրբ առաքեալքն Քրիստոսի և երանելի հարքն առաջնոց երից տիեզերական սուրբ ժողովոյն, որ ի նիկիա, ի Կ. Պօլիս և յԵփեսոս:

Ըստ ներեւոյ ամենախնամ Արտրյին և ի նախնիս մեր համբ, որպէս ի ձեզ, փորձութիւնք հաւատոյ բազմադիմիք. զի յարեան ի վերայ հօտին Քրիստոսի մոլորդութիւնք մոգական ուսման, հրապոյրք հեթանոսական բարուց և պատրանք աշխարհային փառաց. յարեան ի մոլորեցուցանել, եթէ հնարինչ իցէ, և զբնտրեալսն, զաշակերտեալսն ճշմարտութեանն աստուածայնոյ. Ելին յարձակեցան ի վերայ քրիստոնէից բռնութիւնք բանտից և կապանաց, սրածութիւնք և գերեվարութիւնք պաշարեցին զանձինս նոցին. դասք և երավք մկրտելոց յաւազանին լուսոյ անկան ի ձեռու մոլորելոց՝ պաշտօնէից հրոյ և արեգական. տաճարք ընծայեալք Աստուծոյ եղեն կոխան թշնամեաց Խաչին Քրիստոսի. վարդապետք Աւետարանին Տեառն տարաշխարհ վարեցան, մաշելով զանձինս ի շղթայս և ի կապանս անօրէնութեան. սրբանուէր անօթք ի պղծութիւն մատնեցան. և պաշտօն Խաչին Տեառն ծաղր և ծանակ լինէր ի հրապարակս. Եւ զի՞նչ. ամբարշտութեանն գոգցես եկեալ հասեալ էր վերստին թագաւորութիւն, իբրև ել Տէր և յարոյց զհաւատացեալս անուան իւրոյ. ընտրեաց զորդիս սրբոյ Եկեղեցւոյս Հայաստանեայց յազգ ընտիր և ի ժողովուրդ սեփական. որք ի հրապարակս թագաւորաց, ի մետաղս տանջանաց, ի գոռ մարտին թշնամեաց և ամենայն ուրեք աղաղակէին և իբրև ի բերանոյ միոյ հնչեցուցանէին զձայն բարեպաշտական հաւատոցն. «Օքէնք աստուածային, ասէին, կացցէ թագաւոր ի վերայ ամենայնի. և ի նմին օրինաց ընկալցին յանցաւորք զպատիժս դատապարտութեան, «Զի ոչ եթէ, ասէին, ընդ մարդոյ է ուխտ հաւատոց մերօց, եթէ պատրիցիմք իբրև զտղայս, այլ անլուծութեամք ընդ Աստուծոյ, որում չիք հնար քակտել և ի բաց ելանել ոչ այժմ և ոչ յապա և ոչ յաւիտեանս և ոչ յաւիտենից յաւիտեանս»:

Զայս վկայութիւն վկայեցին, որդեակք իմ, հարքն մեր երանելիք, վառեալք ի նախանձ սիրոյ սուրբ և առաքելական Եկեղեցւոյս յաւուրս անդ դառնաղէտ փորձութեանցն, որք հայէին ի կործանումն հաւատոցն որ ի Քրիստոս Յիսուս. Տէր ինքնին մարտեաւ զմարտն հաւատոյ. Նոյն նա եղեւ առաջ-

նորդ սրբոց հարցն Նեռնդեանց և սրբոց զօրալարացն Վարդանանց, նոյն նա փչեաց զոգի իւր յերանելի և յերջանիկ հայրապետմն, յաստուածիմաստ և ի հոգեղքեաց վարդապետսն Եկեղեցւոյս մերոյ սրբոյ, որոց ամենեցուն ի մի վայր խմբելոց հակառակամարտ ձայն քարոզութեան լուեցուցանէր զմոլորութիւնսն և ափ ի բերան առնէր զամենայն իմաստակուն, որք անուամբ Ցեառն մերոյ օրէնս յօդէին նորս և կարծիս յերիւրէին անպատեհս իբր ի լուսաբանութիւն ճշմարտութեանցն, զօրս յստակագոյնս ուսուցանէ մեզ Հոգին Սուրբ բերանով մարգարէիցն և առաքելոցն սրբոց:

Աղաքէն Ա. Եկեղեցիս Հայաստանեայց ի վախճան անդ դարուն հինգերորդի համաշխարհական վկայութեամբ որդւոց իւրոց առաջին հանդիսացաւ ախոյեան և ընդդիմամարտ հեթանոսական մոլորութեանց և եղեւ աղբիւր անապական ամենայն կարգաց և աւանդութեանց առաքելականաց, յորս և յաւել ընթանալ դարուց ի դարս ցայսօր ժամանակի:

Իսկ զարևմտէիցն որ զայնու ժամանակաւ քրիստոնէից զի՞նչ ասացից որք բուռն հարին զընթացից և զնպատակաց հակառակ եղելոց վարդապետութեան Հոգւոյն Սրբոյ: Անդ ի յաճախել հակաճառութեանց ինչ, լինէր մարտնչիլ քրիստոնէից ընդ քրիստոնեայս, որք խռնէին ի կագս և ի կուիւս կրօնականս վասն տիրապետութեանն իշխանականի, անդ և եպիսկոպոսացն Հոռվմայ ձգտիլ յիշխանութիւն աշխարհային առ ի բռնանալ ի վերոյ այլոց:

Եր երեմն, զի և քրիստոնեայք արևմտից առաջնորդեալ ընդ ձեռն նախնի ս. հարց, միով յօդիւ քրիստոնէական սիրոյ և խաղաղութեան յօդեալք էին ընդ միմեանս և չերեւէր ի միջի բազմալեզու և բազմացեղ դասուց մարդկուն ձգտումն ինչ՝ բայց միայն միոյ և եթ արտայայտութիւն ոգւոյ հեղութեան առ ամենեսին: Եւ թէպէտ ոմանք յեպիսկոպոսացն Հոռվմայ երբեմն յաւակնէին իշխանականաւ վարիլ առ այլս վիճակաւ, սակայն ս. հարք Եկեղեցւոյ, վառեալք ի նախանձ աւետարանական սիրոյ և հաւասարութեան, յանդիմանեալ կշտամբէին զայնպիսիսն և հաստատէին ի միջի զոգի

Խոնարհութեան և զկարգ համապատառութեան։ Այնպէս զի՝ մինչեւ իսկ ի վերջ կոյս դարուն վեցերորդի եպիսկոպոսն Հռովմայ Մեծն անուանեալ Գրիգորիոս, որ եպիսկոպոսականաւն և եթ շատանայր պարզ կոչմամբ և մերժէր յինքենէ զմուկանունդ պապ, կշամամբեալ խրատէր զեպիսկոպոսն կայսերական քաղաքին Բիւզանդիոյ՝ զՅովհաննէան Պահեցող, զթելինածւն տիեզերական պատրիարքութեան. զոր և յորդորէր, զի մի ամբարտաւանիցի հակառակ վարդապետութեան Տեառն. «Ո՞րպիսի պատասխանիս տացէ Քրիստոսի միոյ միայնոյ Գլխոյն Կաթուղիկէ Եկեղեցւոյ՝ այն, որ կամի ընդ անուամբ տիեզերական պատրիարքի հնագանդեցուդանել զամենայն անդամն Քրիստոսի. և որ ոչ իսկ հայր է, զիարդ կոչիցի տիեզերական հայր քրիստոնէից» ասէր յայնժամ նախանձաւորն նախնական փառաց սըբոյ առաքելական Եկեղեցւոյ՝ մեծն Գրիգորիոս։ Այլ ոչ ընդ երկար եղեւ ժամանակն այն. զի զինի դարու միոյ անցանելոյ՝ յաջողեալ լինէր եպիսկոպոսացն Հռովմայ հնարիւք իմն հասանիլ ի գահ արքոյական և զօրու և զինու աիրել գաւառաց և ժողովը դոց՝ հակառակ բանից աստուածային Վարդապետին մերոյ, որ ասէ. «Գիտէք, զի իշխանք ազգաց տիրեն նոցա. և մեծամեծքն իշխեն նոցա. ոչ այնպէս իցէ և ի ձերում միջի, այլ որ կամիցի ի ձէնց մեծ լինիլ, եղիցի ձեր պաշտօնեայ. և որ կամիցի ի ձէնց առաջին լինիլ, եղիցի ձեր ծառայ, որպէս Որդի մարդոյ ոչ եկն պաշտօն առնուլ, այլ պաշտել տալ զանձն իւր փրկանս փոխանակ բաղմաց»։

Աստանօր յաշխարհային ի տիրապետութեան իսկ եպիսկոպոսացն Հռովմայ է տեսանել ապաքէն չարիս, զորոց զի մանիսն ոչ ուրեք է գտանել ի տարեգիրս պատմութեան Եկեղեցւոյն Քրիստոսի։ Անդ բոցացեալ խրոյկք հաւատաքննութեան. անդ կենդանամահ կտտանք և սպանութիւնք անձանց՝ իբր ի հերձուածս եղելոց. անդ փրկելոցն արեամբ Կենարարին հեղմունք արեան առ ոտս իշխանական աթոռոյ եպիսկոպոսաց և նուիրակաց Հռովմայ. անդ վաճառումն շնորհաց և սրբութեանց և առհասարակ բարձումն ամե-

նայն գիրոյ և խաղաղութեան ի շահ երկրաւոր տիրապետութեան գահուն Հռովմայ:

Ի կարգէ չարեաց այսոցիկ, որք ընդ ձեռն փառասիրական ձգտմանց աթոռոյն Հռովմայ մտին յաշխարհ քրիստոնէից, են ապաքէն և այնոքիկ թուղթք և յիշատակարանք, զորս հնարել հնարեցին արբանեակք Հռովմայ ի ստուգութիւն գլխաւորութեան եպիսկոպոսացն՝ պապ անուանելոց՝ ի վերայ Եկեղեցւոյն Քրիստոսի: Թուղթք կեղծք, որպէս յայտնի է ամենեցուն, և դաշինք ստայօդք, յորս յաւէտ արծարծեալ լինին բանք՝ հակառակք աւետարանական ճշմարտութեանց՝ զկարծեցեալ գլխաւորութենէ «ըրբազան առաքելոյն Պետրոսի և զանհիմն իրաւանց իբր փոխանորդաց նորին՝ եպիսկոպոսացն Հռովմայ՝ ի վերայ համօրէն հօտին Քրիստոսի: Զի, որպէս գիտեմք, Փրկիչն մեր հաւասար իշեաց յառաքեալսն իւր և ասաց ամենեցուն. «Առէք Հոգի Սուրբ. և զոր կապիցէք յերկրի, եղից՝ կտպեալ յերկինս, և զոր արձակիցէք յերկրի, եղիցի արձակեալ յերկինս. և հաւասար ուխտեաց ամենեցուն նոցա ի միւսանգամ գալստեան իւրում նստիլ յերկոտասան աթու և դատել զերկստասան ազգ Խորայէլի: Ապա ուրեմն ոչ ումեք յաշակերտաց իւրոց շնորհեաց Փրկիչն մեր առանձին իմն իրաւունս և արտօնութիւնս: և զոր ետ նոցա, ոչ երկրային ինչ էր իշխանութիւն ի վերայ մարմնոյ և կենաց մարդկան, այլ երկնային և հոգեոր ի փրկութիւն հոգւոց և ի լուսաւորութիւն մոտաց: Լսու այսոմ՝ և սուրբ Եկեղեցիս Հայաստանեայց գիտէ և խոստովանի զամենայն առաքեալսն Քրիստոսի համապատիւս միմեանց և հաւասարս. ընդունի զնոսա զամենեսին իբրև զհազարապետս աստոտածային խորհրդոցն, յորոց ի ձեռն բացեալ և փակեալ լինին գրունք արքայութեան երկնից: Նմին իրի և զյաջորդութիւն նոցին գիտէ ընձեռեալս նովին համապատութեամբ և ոչ զօք կարգէ գեր ի վերոյ, և ոչ ևս ընդունի զսուրբ առաքեալն Պետրոս հիմն և գլուխ Եկեղեցւոյն Քրիստոսի. զի, որպէս վկայէ Հոգին սուրբ բերանով երանելոյն Պօղոսի «Հիմն

այլ ոք ոչ կարէ գնել քան զեդեալն, որ է Յիսուս Քրիստոս։
Իսկ որոց ի կարծիս մտեալ իցէ մոլորութեան, իբրութէ
սուրբ Եկեղեցիս Հայաստանեայց լեալ իցէ երբէք ընդ իշխա-
նութեամբ Եկեղեցւոյն Հռովմայ, զԴաշնացն անուանեալ
թուղթ առնուն ինքեանց ապացոյց ստուգութեան։ Զգոյշ
լերուք, սիրելիք, ի խմորոյ անոի պապականաց, զի ոչ իւիք
մարթ է հաստատել զգոյութիւն այնր թղթոյ ի հնումն։
ի հռովմէականաց անտի Հնարեալ է այն, զորոյ զկեղծիս և
զստութիւն մարթ է տեսանել ի մոացածին պարունակութե-
նէ անտի և յոճոյ գրութեանն. զայս թուղթ առեալ ի ձեւին,
մոլորեցուցանէին հռովմէականք զպարզամիտսն և զտգէտսն
ի ժողովրդենէ, և զարդիս ևս Հնարին մոլորեցուցանել։

Ե՞ն, են արդարեւ լեալ ուխտադրութիւնք թագաւորաց
Հայոց քրիստոնէից ընդ կայսերացն Հռովմայեցւոց, իմա Շիւ-
զ անդացւոց. և հայրապետք Հայոց իբրեւ խորհրդակիցք թա-
գաւորաց մերոց և իբրեւ խնամքակալք և պաշտպանք ար-
քունական գահուն Հայաստանեայց ի դարս դարս եղեալ են
յար ի նմին ուխտի ընդ թագաւորաց իւրեանց։ Այլ լուա-
րուք, որդեակք իմ, և ունկն դիք բանից իմոց. չէին դա-
շինքդ այդոքիկ և ուխտադրութիւնքդ յանուն հնազանդու-
թեան Աթոռոյն Հայաստանեայց ընդ իշխանութեամբ Եպիս-
կոպոսին Հռովմայ։ Եւ եթէ հայրապետք Հայոց վասն պաշտ-
պանութեան հայրենեաց ձայնակիցք լեալ են թագաւորացն
Հայոց և պահպանեալ են զխաղաղութիւն, այն ոչ ընդ
Հռովմն էր և ոչ ընդ Եպիսկոպոսունս Հռովմայ, այլ ընդ
Բիւղանդացիս և ընդ կայսերսն Հռովմայեցւոց արեւելից։
Սակայն ի վախճան անդ դարուն հինգերորդի էանց հեռա-
ցաւ ի մէնջ և պատահումնն այն, և ետ տեղի նորոց հանգա-
մանաց, յորս քաղաքական իշխանութիւն Հայոց բարձեալ եղեւ
ի միջոյ, և Եկեղեցականն այնուհետեւ բարձր ի գլուխ պան-
ծայր ինքնուրոյնութիւն ըստ հարազատ շաւղաց՝ աւանդելոց
մեզ յառաքելոց սրբոց և ի մերոց լուսաւորչաց։

Եւ եթէ ի դարս ինչ ժամանակաց թշուառութեան ոմանք
ի մերազնէից՝ յեկեղեցականաց և յաշխարհականաց՝ կարծիս

ետուն ի հաստատել զատուգութիւն Դաշանց անուանեալ թղթոյն, ոչ զի այնու խոստովանեցան զգլխաւորութիւն եպիսկոպոսացն Հռովմայ, այլ զի յուշ ածցեն զնախնականն պատկեր սիրոյ եղբայրութեան քրիստոնէից առ միմեանս։ Այսպէս գիտեմք և զվկայելն երբեմնտպէս ոմնոնդ յեկեղեցիանաց և յաշխարհականաց յետին ժամանակայս զգոյութինէ ուխտի ինչ միաբանութեան և Դաշանց անուանեալ թղթոյ, զորոյ զիսկագիրն օրինակ ոչ ուրեք է տեսանել ապաքէն ի պատմութիւնս և ի յիշատակարանս Հայոց հնագոյն ժամանակաց, և զորս յայժմուսս իսկ գտանեմք ի գիրս ընչ Ագաթանգեղեայ պատմչի, ոչ ի վաւերականաց սակի համարիմք զօրինակո նոցին, այլ գիտեմք զայնոսիկ յերիւրեալս ընդ ձեռն պապականաց Հայոց կամ օտարաց ի յետին ժամանակս տգիտութեան և ի ինոռվայոյզ հանգամանս անդունիթուական շարժմանց ի վերջ կոյս դարուն չորեքտասաներորդի։

Ընդ ստութեան Դաշանց անուանեալ թղթոյն անհիմն են նոյնպէս և ճանապարհորդութիւն մեծի Լուսաւորյին մերոյ ընդ արքային Ցրդատայ ի Հռովմ, և ձեռնագրութիւն նորին ի սրբոյն Սեղբետրեայ յեպիսկոպոսէն Հռովմայ։ Մի լիցի ձեզ, միրելիք, ի հրապոյրս անկանիլ այնպիսեաց իսկ առասպելանման աւանդութեանց արբանեկացն Հռովմայ, որք հիգընթափ լինին ապացուցանել զհպատակութիւն Եկեղեցւոյ Հայոց ընդ իշխանութեամբ այլոյ իմն աթոռոյ արտաքոյ աշխարհիս մերում։

Գիտասցիք ապաքէն, զի ի սկզբանէ անտի քրիստոնէութեան Հայոց ցվախճան դարուն մետասաներորդի ոչ ոք ի հայրապետաց Հայոց և ոչ այլք յեկեղեցականաց դարուցն նախնականաց պէտս արարեալ են երբէք գիմելոյ ի Հռովմ քաղաք ուխտի աղագաւ կամ ի ցուցանել զհպատակութիւն առ Եպիսկոպոսն Հռովմայ կամ առ այլ ոք յեկեղեցականացն արեւմտից։ Նմանապէս և ի չըջանի անդ նշանակեալ ժամանակի չեն և չեն եղեալ ժողովք Եկեղեցականք իրեւ ի վկայութիւն զգլխաւորութենէ Եպիսկոպոսին Հռովմայ և զկրտսերութենէ Եկեղեցւոյս մերոյ։ Զգուշացուցանեմ զձեզ,

որդեակք իմ, ի մոլորութենէ աստի յայրպիսւոյ, որ մոտցածին զրպարտութիւն իմն է զհայոց ժամանակին նախ քան զդարն երկոտասաներորդ: ՅՌ-2 լիզի ձեզ և հաւաստի լեռուք, զի յաւուրց անտի սրբոյն Գրիգորի Լուսաւորչի ցւարն երկոտասաներորդ չիք լեալ յարաբերութիւն հայրապետացն Հայոց ընդ եպիսկոպոսունս Հռովմայ, այլ սկիզբն յարաբերութեան նոցին ընդ ազգի մերում եղե յաւուրո անդարշաւանաց Խաչակիր անուանեալ գնդից արեւմտից ի սուրբ տեղիսն Երուսաղեմի՝ ազդեցութեամբ և նախաձեռնութեամբ եպիսկոպոսացն Հռովմայ:

Եւ որ առաջին եղե ի հայրապետացն մերոց, որ չոգաւ յուխտ ի Հռովմ քաղաք և ընկալաւ մեծարանս յեպիսկոպոսէն Հռովմայ իբրև զհամապատիւ և զհաւասար ոք ի կարգս եկեղեցականաց, այն Պահլաւունին էր Գրիգոր Բ. մականուանեալն Մեծ Վկայասէր, որ ի վերջին ամս դարուն մետասաներորդի աւանդեաց զԱթոռն Հայրապետական ի ձեռն տեղապահի և ինքն ել ի շրջել յաշխարհս յաշխարհս այնր ժամանակի՝ ի պատճառո թարգմանութեանց և վասն անձամբ զիործ առնլոյ զկենաց այլոց քրիստոնէից արեւմտից: Նոյն նա էջ ի կիլիկիոյ ոչ միայն ի Հռովմ քաղաք, այլև ի Կ. Պօլիս և յերուսաղէմ և յԱղէքսանդրիա և յայլ նշանաւոր տեղիս քրիստոնէից այնր ժամանակի: Արդ՝ որպէս աւանդեն մեզ պատմութիւնք և յիշատակարանք եկեղեցւոյս մերոյ, ոչ ուրեք եթող նա ուխտ ինչ կամ դաշն. և չիք ի նմանէ, որպէս և ի նախորդաց նորին, նամակ ինչ առեպիսկոպոսունս Հռովմայ սակա հպատակութեան և կամ սակս խոստովանութեան զհնազանդութենէ նախորդաց իւրոց առ աթոռն Հռովմայ:

Գիտեմք սակայն և հաւաստի եմք ի պատմութենէ թագաւորացն Հայոց Կիլիկիոյ, զի յետ սկզբնաւորութեան արշաւանացն Խաչակրաց Հայք՝ խնդամիտք ընդ յոյս ազատութեան սրբոց տեղեաց և լցեալք հաւատով ի Գրիստոս Յիսուս՝ զնախնականն սիրոյ և զքրիստոնէականն եղբայրութեան ցուցին առ արեւմտեայս զհանդէս պահնծալի, իբրև

մատուցին ձեռն օգնականութեան նոցա՝ պաշարելոց յամենայն վտանգս ի շրջակայ ազգաց։ Նախնիք մեր, հաստատեալք ի բարձունու անդ կիլիկիյ, ելին զինեցան յանուն սրբոյ Աւետարանին առ ի առաջնորդել անծանօթ զինւորելոցն յանուն Խաչին Քրիստոսի, ընձեռելով նոցա և բաղում նպաստո նիւթեականս յանծանօթ երկրի։

Արդ ակներեւ է, զի յընթացս գարուն երկոտասաներորդի եղեւ առաջին յարաբերութիւն Հայոց ընդ քրիստոնէիցն հռովմէականաց և այն՝ թէպէտեւ յանուն քրիստոնէութեան, սակայն առաւելապէս ընդ ձեռն իրաց քաղաքականաց, նամանաւանդ՝ յուսով հաստատելոյ ի Կիլիկիա զնոր իմն գահ արքայական։ Անդ եղեն արդարեւ ի կողմանէ իշխանացն Ռուբինեանց բանակցութիւնք և հրեշտակութիւնք, յորս՝ խընդիրը քաղաքական գերիշխանութեան և ինչ ինչ պայմանք հնազանդութեան, յուզեալք ի կողմանէ եպիսկոպոսացն Հռովմայ, մերթ յարգելիք եղեն և մերթ խոտելիք. այլ սակայն՝ զինչ և ենր, չեն այնոքիկ փոխանակութիւնք կարծեաց ի կարգի կրօնական և նուիրապետական խնդրոց, զի Եկեղեցիս Հայաստանեայց ըստ ամենայն մասանց կազմութեան իւրոյ՝ մանաւանդ թէ և վարդապետութեան՝ յաւել ընթանալ անկախ յայլոց ի նմին իսկ ինքնուրոյնութեան, յորում էրն յառաջքան զդարն երկոտասաներորդ։ Զայս տեսանեմք յամենայն իրս Եկեղեցական ժողովոց և Հայրապետական թղթոց, ևս և համայն աստուածպաշտական կարգաց և ծխից համօրէն քրիստոնէիցն Հայոց՝ սկսեալ յաւուրց անտի արշաւանաց Խաչակրաց ցայսօր ժամանակի։ Բարերարութիւնք աթոռայն Հռովմայ առ իշխանս Կիլիկիյ՝ ընկալեալք յարգանօք և երախտագիտութեամբ՝ չեղեն բաւական ի խախտել զանկախութիւն և զինքնուրոյնութիւն Եկեղեցւոյս մերոյ։

Եւ թէպէտ մեքենայութեանցն Հռովմայ մերթ ընդ մերթ յաջողեալ լինէր՝ ընդ ձեռն իշխանաց և թագաւորացն Հայոց Կիլիկիյ տալ գումարել ժողովս ինչ Եկեղեցականս, սակայն չէին ժողովքն այնոքիկ ի կարգի վաւերական գումարմանց որբոց հարց Եկեղեցւոյն Հայոց և ոչ ընկալտւ երբէք սուրբ

Եկեղեցիս մեր զորոշմանց նոցին զկանոնսն իբրև պարտաւորականս ինչ, այլ անդէն և անդ խոտեալ մերժեաց բազմաթիւ թղթովք, մանաւանդթէ և յաւէտ առանց կիրառութեան թողլով զայնոսիկ: Ի սակի այդպիսեացդ են և բըռնազբօսեալ ժողովք Սույ և Առանայի՝ յիշատակեալք ի շրջաբերականի քահանայապետին Լեռնի ծԳ:

Եւ զոր շահեցաւն աթոռ Հռովմայ յորոգայթադիր արքանեկաց իւրոց, եկեղոց ի կիլիկիա և ի Հայս, ի դարս անդ ժամանակաց ծանու և անբերելի նեղութեան ազգիս մերոյ սկսեալ յժ՞էն և այսր, ոչ հայէր ի պայծառութիւն ինչ Եկեղեցւոյն Քրիստոսի և յաճեցումն կենդանի հաւատոցն որ ի Տէր, այլ ընդ հակառակն ի վտարումն և ի պառակտումն հօտին Քրիստոսի, և ի հեղումն անմեղ արեանց յաւէտ ևս և գառն արտասուաց այնոցիկ, որք ցայն օր ժամանակի կէին ի հոգեկանն անդորրութեան ի ծոց սրբոյ Եկեղեցւոյս մերոյ: Գիտելի լիցի ձեզ, սիրելիք, զի ի բազմաթէո պատահմանցս աստի յայսցանէ եղեւ շփոթութիւն մեծ ի հօտիս մերում: և որք ելինն ի ծոցոյ մօրս մերոյ լուսոյ սրբոյ Կաթուղիկէ Եկեղեցւոյս Հայաստանեայց, մատնեցան ի դատապարտութիւն խղմի իւրեանց: Յուշ լիցի ձեզ, որդիակք իմ, օրինակ Հայոց բնակելոց ի Լեհս. Էր երբեմն, զի յանուն նոցա պանծային քաղաքք և աւանք փարթամացեալք և սքանչանային օտարք յոյժ յոյժ ընդ ջերմեռանդն աստուածպաշտութիւն և ընդ առաքինի բարս գալթականացն Հայոց. այլ արդ՝ ուր են յիշատակք նոցին. շնորհիւ որոգայթիցն Հռովմայ, աւազ յընթացս կարճատեւ ժամանակի ջնջեալ եղեւ անուն նոցա ի շրջանէ հայազգութեան և եղեն նոքա իբրև զփոշի ցնդեալ յօդս անվայր և աննեցուկ ամենեին: Այսպէս վիճակեցաւ և բազմաց այլոց ազգաց, յառաջն եղելոց ի ծոց եկեղեցւոյն Հռովմայ, յորոյ ի բռնութեանցն և ի մոլորամիտ վարդապետութեանցն եղեւ բազմանալ նորանոր հերձուածոց ի քրիստոնեայս արեմոնից:

Արդ չե՞ն այսոքիկ ամենեքին բաւական ի ցուցանել թէ եպիսկոպոսն Հռովմայ ոչ զլոյս և ոչ զկենդանի հաւատ

որոնէ, այլ զգերիշխտն բռնակալութիւն իւր ի վերայ Եկեղեցոյն Քրիստոսի: Սթէ լուսցեն մարդիկ ի պատմել զխոտորագնաց անցելոյն Հռովմայ, ոչ ներկայս իսկ առաջի աչաց մեր դնէ, զորս ի վնաս Եկեղեցոյն Քրիստոսի նիւթէ աժոռոն Հռովմայ վասն փառաց և աշխարհային մեծութեան իւրոյ: Ե՞րբ քարողեաց Փրկիչն մեր գիտել զմարդն անօխալական և առանց մեղաց, որպէս աժոռոն Հռովմայ քարողէ. ո՞ ոք յառաքելոց նորին և յաշակերպաց պատուէր ինչ աւանդեաց առ հաւատացեալս վասն դաւանելոյ զեպիսկոպոն Հռովմայ արժանի այնպիսւոյ պատուոյ և փառաց, որ Տեառն Ամենակալին է անկ. յոր զիրս կամ յորժում դարու վարդապետեաց ոք զայնպիսի իմն մոլար վարդապետութիւն, դոր սահմանեաց ժողով Եկեղեցոյն Հռովմայ յամին 1869: Արդ լուարուք, որդեակը իմ, առ ի՞նչ եղաւ սահման այսպիսի. վասն խաղաղութեան արդեօք աշխարհի կամ վասն փրկութեան հոգւո՞ց մարդկան: Քան և մի լիցի ձեզ զմտաւ ածել զայսպիսի ինչ. վկայեն իրք ժամանակիս, ծագեալք առ հասարակ յաշխարհս յաշխարհս Եւրոպիոյ յերեսաց ինչ ոտնձգութեանց և պէսպէս յաւակնութեանց եպիսկոպոսացն Հռովմայ. այլ զի՞ երկարեցից զբանս զայլոց ազգաց. աւագիկ առ ձեզ ին բաժանելոցն ի մերազնէից ժողովը դականաց Հռովմէականաց յիշատակարանք և իրակութիւնք ժամանակակիցք. ո՞ ոք բաժանեաց զորդի ի հօրէ և զքոյր յեղքօրէ և վրդովեաց զկենցաղ խաղաղակեաց քրիստոնէիցն, ի Կ. Պօլիս և ի գաւառս նորին թնակելոց, և կնքեաց անուանս կուսակցութեանց նորանշան խմբից և խմբակաց ի ծոց Հռովմէականութեանն աճեցելոց: Ո՞չ այս ամենայն արգասիք են ջանից արբանեկացն Հռովմայ, որք հետամուտ են ի հաստատել ի միտս մարդկան զկարի անհեթեթ գաղափար, թէ անսխալական է քահանայապետն Հռովմայ և անքողոքելիք են հրամանք նորին:

Եւ չե՞ն արդեօք յաւուրս մեր ի նոյն շաւիզս գալթակղութեան արբանեկալքն Հռովմայ, որք յանդգնեալ հանին, հրատարակեցին թուղթ շրջաբերական ի քահանայապետէն

Հռովմայ, առ ի հրապուրել զորդիս սրբոյ Եկեղեցւոյս
մերոյ ի ծոց հռովմէականութեան: Առ ինչ արդեօք հային
միտք մոլորեցուցացն, որք ելանեն թղթով խուզվել զհօտ
աստուածային Հռովւապետին մերոյ Քրիստոսի, որ զերկնա-
յինն իւր շնորհեաց զիսաղաղութիւն, և գան վերստին ի
մարմինս թշնամականս տրոհել զայն, որ միացեալն է ի
Քրիստոս Յիսուս հաւատով Ամենասուրբ Երրորդութեան:
Միթէ համարիցին պաշտօն մատուցանել Աստուծոյ՝ ի մտա-
նելն իւրեանց յագարակ ճշմարիտ վարդապետին և իսեր-
մանելն անդ զորոմն չար. զի բերանով քահանայապետին
իւրեանց զհայս մոլորեալս քարոզեն և ստութիւնս յօդեն
անվայելս, տալով հրատարակել ի թղթի անդ, թէ Հայք՝
ժողովուրդք սրբոյ Եկեղեցւոյ մերոյ՝ ծագմամբ և անուամբ
համակիցք Հայոց հռովմէականաց՝ կարօտք ինչ են խելա-
մուտ լինելոյ առ ի վերահաստատել զայն իսկ միութիւն
ընդ Հռովմայ, յորմէ հեռացեալ են նախնիք իւրեանց: Եւ
որ չարագոյն ևս է, քահանայապետն Հռովմայ տայ գի-
տել ի ձեռն արբանեկաց իւրոց, թէ մտանելն Հայոց ի ծոց
Եկեղեցւոյն Հռովմայ եղիցի պատճառ ոչ միայն յաւիտենական
փրկութեան հոգւոց, այլև բարօրութեան կենաց և առ հա-
սարակ ամենայն ցանկալի բարեաց աշխարհի: Թողումք ասել,
զի բանք քահանայապետին Հռովմայ ոչ յայն և եթ յանդ
ելանեն, այլ հային և առ այլ քրիստոնեայս աշխարհի,
զորոց պատուիրէ աղօթել, որպէս զի յետ դարձին Հայոց
ի կարծեցեալն միութիւն, և այլ ամենայն ժողովուրդք, որք
զՔրիստոս պաշտեն, դարձցին ի ծոց Եկեղեցւոյն Հռովմայ,
յորմէ մեկնեալք են:

Հարկ ինչ իցէ ապաքէն յանդիման առնել որդւոցդ Սրբոյ
Եկեղեցւոյս մերոյ զհակասութիւնս բանից քահանայապե-
տին Հռովմայ, որք ակներեք են ամենենին. այլ սակայն
ասացից՝ առ ի ցուցանել ձեզ զճշմարտութիւնն: Գիտելի է
նախ, զի ոչ ամենայն Եկեղեցիք քրիստոնէից եղեալ են ի
ծոց Հռովմէական Եկեղեցւոյն, այլ այնոքիկ և եթ, որք
թօթափեալ զլուծ բռնակալութեան Հռովմայ, ելին արտաքոյ

քան զգաւիթն նորա. իսկ Հայք, որպէս և այլք ի քրիստոնէից ժամանակիս, ոչ երբէք եղեալ են ընդ իշխանութեամբ եկեղեցւոյն Հռովմայ, ոչ ի գարս նախնականս և ոչ զկնի այնոցիկ ցներկայս իսկ, որպէս ցուցաւ ի վերոյութիւնի՝ և ոչ երբէք կարօտացեալ են կամ կարօտանայցեն իսկ խելամուտ լինելոյ առ ի յընտրել զմիութիւն ընդ այլոց եկեղեցեաց։ Եւ երկրորդ, ոչ գիտեմք և ոչ խոստովանիմք քնաւ, եթէ հաւատափոխութիւնք յԵկեղեցւոջ Քրիստոսի լեալ իցեն երբէք օգտակարք և պատճառք ինչ աշխարհային բարեաց ազգաց և ազանց։ Ո՞ գովեաց զՄեհրութանն Արծրունի և զՎասակն Սիւնի և զամենայն ուրացողս ընդ նոսին. ո՞ ոք բարձրացոյց զյիշատակ անուան Յովհաննու Քոնեցւոյ, զԱղթարմայից, զՌւնիթուաց և զամենայն խոռվարար ընկերաց նոցին և զհետեւողացն. մյր ուրուք յաջս մեծ ոմն թուիցին Նիկոլն ուրացող և հետեւողք նորին։ Ո՞ ոք առանց կարեկցական արտասուաց յիշեցէ զանուն և զյիշատակ այնոցիկ խորդացելոցն ի մէնջ, որք զհայրենեացն թողեալ զպանծալի յիշատակ, զազգայնութեանն թողեալ զարժանապատուութիւն և զԵկեղեցւոյ իւրեանց զինքնուրոյնութիւն, մտին ընդ լծով ծառայութեան օտարաց։ Աղէ՛ցուցէք ինձ զշահս վաստակոց նոցա։ Այլ թողցուք զանձինս, յիշատակ որոց մմէկ զսիրտ մեր և գառնացուցանէ զոգիս։ Աղէ՛ ասասցեն մոլորեցուցիչքն, որոյ ազգի և որում հասարակութեան առթեաց բարիս ազգակործանն վատիկան. զի՞ է, զի ամենայն քրիստոնեայ ազգք՝ հպատակք անգամ հռովմէական եկեղեցւոյ՝ երեսս դարձուցանեն ի պաշտօնէից նորին, արտասահման առնեն ի միջոյ իւրեանց զդասս դասս վանականացն հռովմէականաց, և որ մեծն է քան զամենայն, զնոյն ինքն զքահանայապետն նոցին՝ զանսխալականն և զաշխարհակալն կարծեցեալ՝ թողուն ի կարօտութեան մեծի, մինչեւ դիմել նորա ի պաշտպանութիւն թագաւորաց և իշխանաց, որք ըստ հռովմէական վարդապետութեան, գոլով արտաքրյ գաւթին Հռովմայ, զուրկք համարին ի շնորհաց վրկութեան։ Յուշ լիցի ձեզ, սիրելիք իմ ի Տէր, զի զոր

խոսանան արբանեակք Հռովմայ ըստ հոգեկան բարեաց, զնոյնն մատակարարէ մեղ Առաքելական Սուրբ Եկեղեցիս Հայոտանեայց բիւրապտիկ տուտելութեամբ. իսկ զոր ինչ խոստանան ըստ աշխարհային բարեացն, զայն ամենայն լիապէս վայելեմք մեք յառատ ողորմութենէ թագաւորաց մերոց. միայն թէ մի լիցի մեղ թերանալ ի հաւատարմութենէն, զոր նախնիք մեր՝ ազատք ի հաւատոյս՝ ծառայեցին քրիստոսածէր Կայսերացն Ուռուաց, մեծազօր Սուլթանացն Սամանցւոց և արեգակնափայլ Արքայիցն Պարսից, որք ամենեքեան ոչ իմիք կարոտացեալք են, բայց միայն հաւատարիմ հպատակութեան և միամիտ ծառայութեան. Ապաքէն հաստատուն կալարուք զհաւատս ձեր ի Քրիստոս և մի խոտորեսջիք ի շաւզաց անտի հարցն մերոց. « Ճուք զկայսերն կայսեր և զԱստուծոյն՝ Աստուծոյ » խրատ բարի տայ ձեզ որդաղան առաքեալն Պօղոս. « Ամենայն անձն, որ ընդ իշխանութեամբ է ի հնագանդութեան կացցէ, քանզի ոչ յուստեքէ է իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ, և որք ենն յԱստուծոյ կարգեալ են »: Նւ միթէ մարթ ի՞նչ իցէ վաճառել զհաւատս ընդ բարեաց աշխարհի: Ո՞չ ապաքէն Փրկիչն մեր իւրոց աշակերտաց գատուիրեաց. « Մի այսուհետեւ հոգայցէք և տսիցէք. զի՞նչ կերիցուք կամ զինչ արբցուք կամ զինչ զգեցցուք, զի զայդ ամենայն հեթանոսք խնդրեն, քանզի գիտէ Հայրն ձեր երկնաւոր, զի պիտոյ է ձեզ այդ ամենայն: Խնդրեցէք նախ զարգայութիւնն Աստուծոյ և զարդարութիւն նորա և այդ ամենայն յաւելցի ձեզ »:

Արդ՝ որ միացեալքդ էք միով Ցէրամբ Յիսուսիւ Քրիստոսիւ ի հաստատութիւն հաւատոյ ընդ հովանեաւ Առաքելական Աթոռոյս Կաթուղիկէ Սրբոյ Եջմիածնի, դասք պաշտօնէից և երամք ժողովրդոց, ի միտ առէք զպատգամն Հոգւոյն Սրբոյ, զորս աւանդեցի ձեզ ի խրատ և ի զգուշութիւն ապագայիցն: Դարք և ժամանակք անցելոցն վկայեն զանօրինակ աստուածակիրութենէ և զբարեպաշտութենէ նախնեաց մերոց: Պարծանք որդւոց՝ հարք, ասէ իմաստունն: Մի լիցի

ի մոռացօնս արկանել զպարծանս մեր զհիմնագիրսն Հայաստանեայց Եկեղեցւոյ՝ զսուրբ առաքեալսն զթադէսո և զբարթուղիմէսո և զսուրբ Լուսաւորիչն մեր Գրիգոր և զամենայն հետեւողս նոցին։ Նոյն Տէրն, որ պահեաց և բարձրացուցէ՛ զշարս մեր նախնիս, նոյն նա պահպանեսցէ՛ և բարձրացուցէ՛ զմեղ ի փառս և ի պատիւ Անուան Խւրոյ։ Նոյն նա պահեսցէ՛ զմեղ յորոգայթից թշնամնոյն՝ յերեւելեաց և յաներեւութից, եթէ ոչ վրիպիցուք ի շաւղաց արդարութեան և ի լուսոյ ճշմարտութեան։

Արդ՝ առ ձեզ են բանքս, սրբազան պաշտօնակիցք և ծառայակիցք իմ ի Քրիստոս, որք դիտապետքդ էք Տանն Կիլիկիոյ և Աղթամարայ, որք պատրիարքունքդ էք Ս. Երուսաղեմայ և Կոստանդնուպօլսոյ, որք առաջնորդքդ էք Համօրէն վիճակաց Հայոց և վանօրէից և քարոզիչքդ Բանին կենաց յամենայն Եկեղեցիս Հայաստանեայց արթուն լերուք և զգոյշ կացէք անձանց և ամենայն հօտիդ, յորում եղ զձեղ Հոգին Սուրբ տեսուչս հովուել զժողովուրդ Տեառն։ զի մի գայլք ապականիչք, ծպտեալք ի զգեստս ոչխարաց, մոցեն ի փարախ ճշշմարտութեան։ Զանացարուք հանապազօր փարել ի մտաց և ի սրտից ամենեցուն որդւոց մերոց սիրելեաց զամենայն զկարծիս մոլորութեան, որք ի ճարտարմութենէ օտարաց սպրդեալ ապականեն զբարս հաւատացելոց։ Հնչեցուցէք ի լուր ամենեցուն մերազնէից, բաժանելոցն մէնջ, զփոզն փրկութեան և զճշմարտութեան և կոչեցէք ի գաւկիթ Փրկչին մերոյ ի սուրբ փարախն Եկեղեցւոյս Հայաստանեայց։ յարուցեալ պնդեցէք զմէջս ձեր գոտեաւ ճշմարտութեան և ի բաց քերեցէք զամենայն ստութիւնս, յօտարաց անտի բարդեալս ի վերայ անբիծ և անարատ Սրբոյ Եկեղեցւոյս Հայաստանեայց։

Խոկ մեք համբառնալով զձեռս ի յերկինս, մաղթեմք ի Քահանայապետէն յաւիտենից՝ ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, զի զԱռաքելական Սուրբ զԵկեղեցին Հայաստանեայց՝ և զհիմնարկեալն Խւրու զԱթոռ Քահանայապետութեան

Հայոց զՄայր Տաճարս Կաթուղիկէ Սրբոյ Էջմիածնի՝ հանդերձ
Հրաշալի վանօրէիւք և վկայարանօք ի հաստատութեան և ի
պայծառազարդութեան պահեսցէ. զհոգեկան կարողութիւնս
հոգեռորական դասուց մերոց, որք մատակարարք են, աստուա-
ծային խորհրդոց, հզօրեղապէս կազդուրեսցէ առ ի անաղարտ
պահպանել յեկեղեցւոջ գիւրքս և զկանոնս՝ աւանդեալս մեղ
ի նախկին Լուսաւորչացն մերոց և ի Հօրէն մերմէ՝ ի Սրբոյն
Գրիգորէ Լուսաւորչէ. տացէ Տէր բան բաւական ի բերանս
շնորհազարդ քարոզաց և համօրէն Եկեղեցական պաշտօնէից
մերոց առ ի սիրայորդոր համոզանօք հրաւիրել զսարտուցեալսն
ի ստեանց հարազատի մօրն իւրեանց՝ Սրբոյ Եկեղեցւոյս Հայաս-
տանեայց՝ դառնալ անդրէն ի գիրկ նորին գժութեան. զմեծ
խնամակալսն ազգիս մերոյ՝ զօդոստափառ Կայսրն ամենայն Ռու-
սաց, զՎեհափառ Սուլթանն Թուրքիոյ և զԱրեգակնափայլ Նահն
Պարսից Տէր Աստուած ընդ հովանեաւ ամենազօր Աջոյն Խւրոյ
պահպանեացէ. և ի կնիք մերոց բանից մաղթեմք յամենաբա-
ւական ողորմութենէն շնորհաց Հոգւոյն Սրբոյ, զի զօրհնեալ
ազգն Հայոց՝ որ ի սփիւռս աշխարհաց՝ պահպանեսցէ ի բա-
րօրութեան, ի խաղաղութեան և ի բարոյականն միութեան ի
փառս մեծի Անուան Խւրոյ այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից ամէն:

ՄԱԿԱՐ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Յուեալ ի չորրորդ ամի Հայրապետութեան մերոյ
յ8 Դեկտեմբերի 1888 ամի Փրկչական
և յաղգային թուականութեան ՌՅԼԸ

Թիւ 471

ի Ս. Էջմիածին: